

## ՈՐՈՇՈՒՄ

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿՈԼԵԿՏԻՎ  
ԺՈՂՈՎԻ (04.03.2019)

Համաձայն ԵՊՀ ռեկտորատի մարտի 4-ին կայացած նիստում ԵՊՀ գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարներին ԵՊՀ ռեկտորի ներկայացրած պահանջի, ս.թ. մարտի 14-ին տեղի ունեցավ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի կոլեկտիվի ժողովը «Համալսարանում ստեղծված իրավիճակի քննարկում, խնդիրների վերհանում և առաջարկությունների ձևակերպում» օրակարգով:

Քննարկման արդյունքում ժողովը ընդունեց հետևյալ հայտարարությունը:

Կոչ ենք անում ՀՀ Կառավարությանը և ԵՊՀ ղեկավարությանը անհապաղ միջոցներ ձեռնարկել ԵՊՀ-ում և ԵՊՀ-ի շուրջ առկա անընդունելի մթնոլորտի առողջացման ուղղությամբ:

Հաշվի առնելով երկրում իրավիճակի փոփոխությունը, առաջնորդվելով միասնականության ձևավորման և մթնոլորտի առողջացման նպատակներով, առաջնահերթ ենք համարում նորովի արձանագրել ներքոհիշյալ աղմկահարույց խնդիրների վերաբերյալ ԵՊՀ դիրքորոշումները՝

1. ԵՊՀ-ն դատապարտում է տարիներ շարունակ «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»-ին խոշոր գումարներ փոխանցելու նախկինում եղած արատավոր պրակտիկան
2. ԵՊՀ-ն դատապարտում է զինապարտության մասին օրենքում տարկետման տրամադրման կարգի փոփոխության վերաբերյալ նախկինում արտահայտած ԵՊՀ դիրքորոշումը և պահանջում է վերանայել տարկետման տրամադրման կարգը՝ առաջնորդվելով կրթության անընդհատության սկզբունքով
3. ԵՊՀ-ն դատապարտում է դասախոսների և ուսանողության հասարակական ակտիվ գործունեության դեմ ԵՊՀ-ում տեղի ունեցած բոլոր տեսակի ճնշումները

Համոզված ենք, որ նշված քայլերը անհրաժեշտ են համալսարանական մթնոլորտի առողջացման և ԵՊՀ-ում պահանջվող բարեփոխումների համար: